

ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս ծրագիրը գիտելիքների արդյունավետ փոխանցման և փոխանակման շահավետ և արժեքավոր նախաձեռնություն է՝ աջակցելու սիրիահայ և տեղաբնակ կանանց խմբերին օգտվելու ասեղնագործության դասընթացներից, ձեռք բերելու կիրառելի հմտություններ և կայուն գիտելիքներ, որոնք կարող ենք ծառայել նրանց ողջ կյանքի ընթացքում անկախ բնակության վայրից:

Այս կարճաժամկետ ծրագրի և փոքր ներդրման շնորհիվ, ավելի քան 30 կանանց (տեղաբնակ և սիրիահայ) դերը և սոցիալական կարգավիճակը բարելավված ընթացքում է: Ծրագրի ավարտին կանանց տրամադրվում են նաև հավելյալ փաթեթներ և գործիքներ հետագա շարունակական գործունեության և եկամտի ստեղծման համար:

Քանի որ, հայկական ավանդական ասեղնագործությունը չի պահանջում էական ֆինանսական ներդրումներ, ուստի կանայք կարող են աշխատել նաև տնային պայմաններում, և հասնել մեծ հաջողությունների: Հանդիսանալով էկոլոգիապես մաքուր, ոչ-ծախսատար, սակայն ժամանակատար և աշխատատար, այս բարձրարժեք գործերը մեծ պահաջարկ են վայելում հայկական և միջազգային շուկաներում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի
միջազգային համագործակցություն
ընկերության (ԳՄՀԸ) ԵՄ «Թիրախային
նախաձեռնություն Հայաստանի համար»
ծրագրի շրջանակում

«ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական
հասարակական կազմակերպությունը
իրականացնում է ծրագիրը

ԵՐԵՎԱՆ 2015

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

2015թ. մայիսի 20-ին «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպությունը Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության ԵՄ «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի շրջանակում շնորհիվեց դրամաշնորհ՝ իրականացնելու հայկական ավանդական ասեղնագործության դասընթացներ կանանց համար:

Ծրագիրը նախատեսում է ներգրավել սիրիահայ վարպետներին փոխանցելու գիտելիքներ և գաղափարներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Հայաստանի հետագա զարգացման գործում, ինչպես նաև, խրախուսել նրանց՝ նպաստելու Հայաստանի գործարար ոլորտում նշանակալից փոփոխությունների իրականացմանը, երկրի տնտեսության և հեղինակության խթանմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել սիրիահայ մասնագետների և նախագծի անմիջական շահառու սիրիահայ

և տեղաբնակ կանանց բարեկեցությունը, ինչպես նաև, նպաստել հայկական ավանդական ասեղնագործության տարածմանը:

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Ստեղծել աշխատատեղեր հայրենադարձ վարպետների համար,
- փոխանցել վարպետների գիտելիքները և հմտությունները տարբեր խմբերի,
- խրախուսել կանանց խմբերին՝ ստեղծելու արվեստի իրենց աշխատանքները,
- նպաստել հանրության լայն խավերի հետաքրքրությանը ավանդական ասեղնագործության հանդեպ,
- հնարավորություն ընձեռել կանանց խմբերին, որպես արտադրողների և վաճառողների, խթանելու կանանց ձեռներեցությունը ասեղնագործության ոլորտում,
- նպաստել սիրիահայ կանանց արագ և կայուն ինտեգրմանը Հայաստանում:

ԹԻՐԱՆ ԽՈՒՄԱԸ

Ծրագրի թիրախ խումբը համախմբում է Հայաստանում բնակվող սիրիահայ վարպետներին՝ տրամադրելու Նորվեգիան, Ուրֆա, Վան և Դանթել ասեղնագործության դասընթացներ 30 սիրիահայ և տեղաբնակ կանանց:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստեղծվել է ինտեգրված հարթակ՝ ապահովելու կարճաժամկետ աշխատատեղեր սիրիահայ վարպետների համար՝ փոխանցելու գիտելիքներ և հմտություններ խոցելի թիրախ խմբերին երկարաժամկետ նպատակներով:

Կանանց ընձեռվել է իրենց կյանքը վերահսկելու հնարավորություն, մասնավորապես, օգտվելու եկամտի ստեղծման հնարավորություններից:

Ասեղնագործության դասընթացների ժամանակ իրականացվել է կանանց իրազեկում որակով արտադրանքի պատրաստման վերաբերյալ, կիրառելու թե՛ որպես արտադրողներ, թե՛ որպես վաճառողներ և ասեղնագործության տարածողներ:

Ծրագիրը խրախուսեց սիրիահայ վարպետներին ստեղծելու արվեստի իրենց գործերը և նպաստեց նրանց արդյունավետ ինտեգրմանը Հայաստանում:

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորվեգիան
Ուրֆա
Վան
Դանթել

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՋՏՈՒՆՔՆԵՐԸ

- մասնակցային և գործնական մեթոդ,
- շոշափելի արդյունքներ,
- ինտերակտիվ հաղորդակցություն և ռեսուրսների արդյունավետ կառավարում,
- կանանց տնտեսական մասնակցություն,
- զարգացում մատչելի ռեսուրսների հիման վրա,
- եկամտի ստեղծման հուսալի աղբյուրների խթանում,
- ասեղնագործության հին ու նոր ուղղությունների, տեխնիկայի վերականգնում և խթանում,
- կայուն ապրուստի միջոցներ և աղքատության նվազեցում: